Բաքվի ձախողումը «հնդկական ուղում»

ԱՌՎԱԿ կենտրոնի մեկնաբանությունը, 26.12.2024 թ.[1]

16.12.2024 թ., հայտնի դարձավ, որ Բաքուն փորձել է «երրորդ երկրի» միջնորդությամբ պայմանագրեր կնքել Հնդկաստանի հետ՝ Ադրբեջանին զենք մատակարարելու համար: Այս մասին առաջինը գրել է հնդկական *The Print* պարբերականը: Սակայն, ըստ թերթի, Նյու Դելին անտեսել է այս նախաձեռնությունը:

Այս լուրը տարածվելուց հետո ադրբեջանական իշխանամետ ԶԼՄ-ները շտապեցին հերքել այն՝ վկայակոչելով այն փաստը, որ Բաքուն վաղուց ուրվագծել է այն երկրների շրջանակը, որտեղից բավական քանակությամբ զենք է գնում: Իբր թե Թուրքիան, Իսրայելը, Պակիստանը, Բուլղարիան, Չեխիան, Սլովակիան և Սերբիան հաջողությամբ բավարարում են բարձրորակ և բարձր տեխնոլոգիական սպառազինությունների մատակարարման վերաբերյալ ԱդրՀ-ի բոլոր հայտերը: Ընդհանուր առմամբ, *The Print*-ի հրապարակումը ադրբեջանական ԶԼՄ-ները որակել են որպես «*ապատեղեկատվություն՝ առանց որևէ ապացույցի*»:

Սակայն մի քանի օր անց հնդկական մեկ այլ հեղինակավոր պարբերական՝ *Indian Defense Research Wing*-ը, որը մասնագիտանում է ռազմական թեմաներով, վկայակոչելով իր աղբյուրները կառավարությունում և երկրի ռազմարդյունաբերական հատվածում, ոչ միայն հաստատեց այս տեղեկությունը, այլև անվանեց այն հնդկական զենքերը, որոնցով Բաքուն հետաքրքրված է առաջին հերթին: Խոսքը *ATAGS* հրետանային համակարգերի մասին է, որոնց մատակարարումներն արդեն իրականացվում են Հայաստան:

Indian Defense Research Wing-ին տված մեկնաբանության մեջ ռազմական վերլուծաբան Ռանեշ Ռաջանն ասել է, որ Նյու Դելին Բաքվին չի ընդառաջել նախ և առաջ Պակիստանի հետ Ադրբեջանի դաշնակցային հարաբերությունների պատճառով: Ըստ հնդիկ փորձագետի, «*Թող Ադրբեջանն սկզբում հեռանա Պակիստանից և միանա Հնդկաստանի դիրքորոշմանը Քաշմիրի հարցում, նախքան Նյու Դելին կմտածի Բաքվին հնդկական զենք վաճառելու մասին*»: Պարբերականը նաև նշել է, որ հնդկական զենքի նկատմամբ Բաքվի հետաքրքրությունը կարող է նոր էջ բացել Հնդկաստանի և Ադրբեջանի հարաբերություններում, սակայն այդ ճանապարհը լեցուն է դիվանագիտական բարդություններով: Զգայուն տարածաշրջաններում պաշտպանական բնույթի առևտուրը սերտորեն միահյուսված է աշխարհաքաղաքականության հետ, և եթե Ադրբեջանն իր արտաքին քաղաքականությունը «*վերահահարմարեցնի Հնդկաստանի ակնկալիքներին համապատասխան, ապա դա կարող է զգալի փոփոխություն նշանավորել Հարավային Կովկասում ռազմական հավասարակշռության մեջ, որոշակի անդրադառնալով նաև հայ-ադրբեջանական հակամարտությանը*»:

[1] Նյութի բնօրինակը (ռուս.) հրապարակվել է մեր կայքէջում 23.12.2024 թ.:

Դատելով ադրբեջանական իշխանամետ ԶԼՄ-ների արձագանքից՝ Բաքուն ծայր աստիճան բացասաբար է անդրադարձել «*հնդկական ուղում*» իր ձախողման թեմայի զարգացմանը: Ադրբեջանական ԶԼՄ-ներում հայտնվել են մի շարք հրապարակումներ այն մասին, որ իրականում հանրապետությունը «*հնդկական զենքի կարիքը չունի*»: Իբր, նախ, այն, ի հեճուկս տարածված կարծիքի, այնքան էլ որակյալ չէ: Երկրորդ՝ Բաքուն Սերբիայից և Սլովակիայից արդեն պատվիրել է 155 մմ տրամաչափի քարշակային հրետանային համակարգեր, որոնք նման են հնդկական *ATAGS*-ին: Խոսքը սլովակյան DITAL-45 ինքնագնաց հրետանային համակարգի (70 միավոր) և սերբական NORA B-52 NG (48 միավոր) մասին է: Բացի այդ, ադրբեջանական աղբյուրները կարծիք են հայտնել, որ եթե նույնիսկ ենթադրենք, թե Բաքուն հետաքրքրված է հնդկական որևէ զինատեսակով, ապա Ադրբեջանի համար անընդունելի են Հնդկաստանի առաջ քաշած պայմանները՝ կապված Պակիստանի հետ: Տարիների ընթացքում Պակիստանն ու Ադրբեջանը կառուցել են աննախադեպ դաշնակցային հարաբերություններ, որոնցից Բաքուն «*ոչ մի դեպքում չի հրաժարվի*»: Հետևապես՝ ակնհայտ կերպով անհնար է իրականացնել ԱդրՀ-ի «*հնդկա-պակիստանյան քաղաքականությունը վերակազմավորելու*» հնդկական պահանջները:

Այն, որ Բաքվի դիմումը Նյու Դելիին իրականում տեղի է ունեցել, բայց անտեսվել է, անուղղակիորեն վկայում է Ադրբեջանի իշխանությունների պաշտոնական ներկայացուցիչների կողմից հնդկական լրատվամիջոցների հրապարակումների նկատմամբ արձագանքի բացակայությունը: Եթե խոսք գնար ապատեղեկատվության մասին, ապա Բաքուն անմիջապես կհերքեր այն պաշտպանական գերատեսչության կամ պաշտպանական արդյունաբերության նախարարության հաղորդագրություններում: Սակայն 22.15.2024 թ. նրանք լռում էին, ինչը հաստատում է հնդկական աղբյուրներից ստացված տեղեկատվության ճշգրտությունը: Ընդ որում՝ Բաքուն ձգտում է կոծկել իր անհաջողությունը ադրբեջանական հասարակության աչքերից, որն ընտելացել է բացառապես Ալիևի նախաձեռնությունների հաղթանակներին: Բացի այդ, միգուցե ԱդրՀ-ի իշխանությունները փորձում են խուսափել Իսլամաբադի կոշտ արձագանքից, որը չի կարող ըմբռնումով ընկալել դաշնակցի ռազմատեխնիկական համագործակցությունն իր գլխավոր թշնամու հետ: Իսլամաբադը համբերատար է Ադրբեջանի և Հնդկաստանի միջև քաղաքական և տնտեսական համագործակցության ներկա մակարդակի նկատմամբ, բայց հազիվ թե պատրաստ լինի դրական վերաբերմունք ունենալ Ադրբեջանի նախաձեռնած գործընթացին, որը կարող է բարձրացնել թշնամական Հնդկաստանի ռազմարդյունաբերական համալիրի վարկանիշն ու եկամուտները:

Տրամաբանական հարց է ծագում. եթե Բաքվի համար այդքան կարևոր է Իսլամաբադի հետ գործընկերությունը, ապա ինչո՞ւ նա կապեր փնտրեց Նյու Դելիի հետ

զենքի գործարք կնքելու համար և, փաստորեն, ընդառաջ գնաց իր պակիստանցի ընկերների կանխահայտ բացասական արձագանքին: Ի վերջո, Հնդկաստանի համաձայնությունն Ադրբեջան–Պակիստան հարաբերությունների ամրության փորձարկում կլիներ:

Գոյություն ունի երկու վարկած.

1. Ադրբեջանը, չնայած իր զինանոցների ավելցուկի մասին թեզի քարոզչությանը, որոշ զինատեսակների խիստ կարիք ունի, որոնց ձեռքբերումը խնդրահարույց է դարձել: Մի կողմից՝ Արևմուտքի, իսկ մյուս կողմից՝ Ռուսաստանի և Իրանի միջև հարաբերությունների աստիճանական սրման պայմաններում սպառազինությունների շուկան որոշակի դժվարություններ է ապրում: Ուկրաինայում ակտիվ լայնածավալ ռազմական գործողություններն արդեն զենքի և զինամթերքի հսկայական ծավալներ են կլանում: Մինչդեռ այն երկրները, որոնք ավանդաբար զենք են մատակարարում Բաքվին, այս փուլում կանգնած են սեփական զինանոցը համալրելու խնդրի առջև:

2. Ըստ որոշ տեղեկությունների, արդեն 3 տարի է, ինչ ԱդրՀ-ն ռազմական համակարգեր չի գնում ՌԴ-ից, քանի որ Մոսկվան Բաքվի պահանջած սպառազինության տեսակներն ինտենսիվորեն ծախսում է ռազմական պաշտպանության վրա, իսկ ՌԴ առաջարկած արտահանման անվանացանկը, իր հերթին, չի բավարարում այդ հարավկովկասյան հանրապետությանը: Մյուս կողմից՝ Բաքվի եվրոպացի գործընկերները (Չեխիա, Սլովակիա, Բուլղարիա) ծանրաբեռնված են ՆԱՏՕ-ի պաշտպանական պատվերներով, որոնք նախատեսված են Ուկրաինայի և, ՆԱՏՕ-ի ու ՌԴ միջև ուղիղ բախման մեծ հավանականության մասին տագնապալի լրատվական հոսքերի համապատկերում, սեփական պաշտպանական կարողությունների համար: Ադրբեջանը պատվերներ ունի Եվրոպայում, սակայն տեսանելի չէ ընդունելի ժամկետներում դրանց կատարման հավանականությունը: Խոսքը, մասնավորապես, կարող է լինել սերբական *NORA* ինքնագնաց հրետանային համակարգերի վերոնշյալ խմբաքանակի մասին, որի գործարքը կնքվել է 2024 թ. սկզբին, սակայն Բաքուն, չնայած հայտարարություններին, դեռևս չի ստացել դրանք:

Եվ վերջապես, Բաքվի սպառազինության հիմնական գործընկերները՝ Անկարան և Թել Ավիվը, հայտնվել են Մերձավոր Արևելքում մեծ պատերազմի շեմին, ինչը չափազանց դժվարացնում է Ադրբեջանի համար անհրաժեշտ ողջ անվանացանկի ապահովումը: Թուրքիան այժմ կենտրոնացած է սիրիական հիմնախնդրի վրա և, ըստ միջազգային աղբյուրների, ինտենսիվ զինում է իր դաշնակիցներին ՀԹՇ-ին և ՍԱԲ-ին, հատկապես այն բանից հետո, երբ Ասադի բանակի նրանց թողած զինանոցները ոչնչացվեցին իսրայելական օդուժի կողմից: Իր հերթին Իսրայելը, որը մեծ ջանքեր է գործադրել Գազայում և Լիբանանում ռազմարշավների համար, նույնպես շահագրգռված է ամբողջությամբ օգտագործել իր պաշտպանական-արդյունաբերական

հնարավորությունները՝ բավարարելու համար իր իսկ սեփական կարիքները, սպասելով տարածաշրջանում լայնածավալ պատերազմի, որը կանխատեսում են վերլուծաբանները: Որոշ հայ փորձագետների կարծիքով՝ իրականությանը չի համապատասխանում, թե՛ վերջին ամիսներին Բաքու-Օվդա չվերթով գրանցված ռազմատրանսպորտային ինքնաթիռների թռիչքները վկայում են Ադրբեջանին իսրայելական նոր մատակարարումների մասին: Հնարավոր է, որ իրականում Թել Ավիվը հետ է ներկրում Ադրբեջանից իր զինանոցները, որոնք երկար տարիներ ինտենսիվորեն կուտակում էր այնտեղ:

Եվ այսպիսով՝ Բաքուն կարող է փորձել մուտք գործել հնդկական մատակարարման շուկա՝ ավանդական գործընկերներից մատակարարումների որոշակի դժվարությունների պատճառով:

2. Չի բացառվում, որ հնդկական սպառազինության շուկա մուտքը Բաքվին նաև պետք է եկել, որպեսզի խոչընդոտներ ստեղծի հայ-հնդկական պաշտպանական համագործակցության սերտացման համար: Հաշվի առնելով գործընկեր երկրներին և միջազգային կազմակերպություններին իր բազմամակարդակ հակահայկական արշավին ներգրավելու Ադրբեջանի մեթոդները՝ կարելի է ենթադրել, որ նման ինչ որ բան նախատեսված էր նաև Հնդկաստանի պարագայում: Թերևս Բաքվի նպատակն էր ամուր անձնական կապեր հաստատել Հնդկաստանի պաշտպանական արդյունաբերության առավել ազդեցիկ պաշտոնյաների և նրա մասնավոր գործընկերների հետ, որպեսզի հետագայում տարբեր փորձված գործիքների, այդ թվում՝ խարդախության և հայկական պայմանագրերի «*կանխման*» միջոցով կարողանա փլուզել հայ-հնդկական ներդաշնակ զարգացող համագործակցությունը: Եվ դա ամեն ամիս ավելի ու ավելի է նյարդայնացնում Բաքվին, քանի որ Երևանն արդեն ձեռք է բերել Նյու Դելիի բացառիկ գործընկերոջ կարգավիճակը՝ մատչելի գներով և վճարումների ժամանակացույցով ժամանակակից բարձր տեխնոլոգիական հնդկական մարտական համակարգերի լայն անվանացանկի հասանելիությամբ:

Բայց Բաքվում, ակնհայտորեն, հաշվի չեն առել, որ Հնդկաստանի պաշտպանական հատվածի ուղղահայաց կախվածությունը երկրի քաղաքական իշխանությունից ամենաուժեղներից մեկն է աշխարհում: Ռազմարդյունաբերական համալիրի առջև երկրի քաղաքական ղեկավարության կողմից դրված պաշտպանիչ պատնեշները գրեթե անհնար է շրջանցել՝ սահմանափակելու դրա չափից դուրս անկախությունը: Քաղաքական նպատակահարմարությունը և տեխնոլոգիայի գաղտնիությունը պահանջում են, որ Նյու Դելին թույլ չտա թշնամական Պակիստանի հետ դաշնակից երկրներին, օրինակ՝ Ադրբեջանին, մտնել իր պաշտպանական հատված: Եվ, ընդհակառակը, սերտ համագործակցություն է զարգացնում միջազգային այնպիսի

դերակատարների հետ, ինչպիսին է Հայաստանը, որի քաղաքականությունը համահունչ է Հնդկաստանի ռազմավարական շահերին:

Հարկ է նաև հաշվի առնել, որ այս պահին Հնդկաստանի ռազմաարդյունաբերական ոլորտում հիմնական գործընկերը Ֆրանսիան է, որը բազմամիլիարդանոց պայմանագրեր ունի Նյու Դելիի հետ՝ նորագույն հրետանային, հրթիռային և էլեկտրոնային համակարգերի, ինչպես նաև ուղղաթիռային օդուժի ու սուզանավերի համատեղ մշակման և արտադրության համար: Փարիզի ազդեցությունը Նյու Դելիի պաշտպանական-արդյունաբերական քաղաքականության վրա զգալի է, և սա, ակնհայտորեն, ևս մեկ պատճառ էր, որ հնդկական կողմը հրաժարվեց Բաքվին թույլ տալ մտնելու իր զենքի շուկան: Փարիզը, ինչպես և Նյու Դելին, որոշակի ջանքեր է գործադրում, որպեսզի վերականգնի 2020 թ. հետո Հարավային Կովկասում խախտված ուժերի հավասարակշռությունը և չթույլատրի տարածաշրջանում Թուրքիա-Ադրբեջան կապի հարաճուն ազդեցությունը:

Այս լույսի ներքո պարզ է դառնում, թե ինչու Բաքուն հնդկական ռազմարդյունաբերական համալիրին դիմեց «երրորդ երկրի» միջոցով, որն ակնհայտորեն նաև բավականին սերտ կապեր ունի Նյու Դելիի հետ: Ադրբեջանը, ամենայն հավանականությամբ, հույս ուներ իր համար հեշտացնել այս ակնհայտ բարդ գործը: Կարելի է ենթադրել, որ միջնորդի դեր ստանձնած «երրորդ երկիրը» կարող է լինել կամ ՌԴ-ն, կամ Իսրայելը: Այս երկու պետություններն էլ գործնականում դաշնակցային հարաբերությունների մեջ են Ադրբեջանի հետ և, իրենց հերթին, Հնդկաստանի հետ բավականին սերտորեն համագործակցում են զենքի համատեղ մշակման և արտադրության ոլորտում:

Բայց, ինչպես պարզվեց, հնդկական կողմի սկզբունքայնությունը և (Փարիզի հնարավոր ազդեցությունը) գերազանցեցին Բաքվի լոբբիստական ներուժը հնդկական զենքի շուկայում: Ադրբեջանում վրդովված են այս փաստից, որքան էլ որ փորձում են այն թաքցնել: